զէմի։ Զկնի երկուց ամաց դարձեալ էառ հրովարտակ վասն այնր, որ 'ի սմին յաւելու, անփոփոխ պահել զիշխանութիւն Պատրիարքութեան. եւ մինչչեւ վախճանեալ իցէ միոյն, չդնել զայլ ոք 'ի տեղի նորա, զի վասն այսր ասէ 'ի բաղում նուագս անկաւ ընդ պարտեօք վանք Ս. Յակոբայ 'ի մեծ ինաս աղգին, ՌՈՀԹ (1678)։

Այլազգի դռնապանք տաճարին Ս. Յարութեան սահմանեալ օրինօք առնուին տուրս յուխտաւորաց անդ 'ի դրան տաճարին, զոր օրինակ 'ի Կոստանդինուպօլսոյ եկեալ յուխտաւորաց 210. 'ի Հայաստանէ՝ 150, յԵգիպտոսէ, 100 փարայ, իսկ 'ի սմին ամի ոչ բաւ համարէին զայսոսիկ տուրս, այլ պահանջէին զայլս եւս, և յընդդէմ դառնալ նոցին, առիթ լինէին նեղութեան եւ ինասուց վանօրէից և ուխտաւորաց։ Եւ յաղագս դտանելոյ զելս իրաց՝ միաբանեցան Հայք ընդ Յոյնս, և գրեցին գիր աղաչանաց 'ի Դուռն, և առաքեցին զայն 'ի ձեռն պատգամաւորի, և ետուն բերել հրովարտակ, չպահանջել դռնապանաց այլ եւս աւելի քան զսահմանեալ տուրսն 'ի նեղութիւն քրիստոնէից. 'ի ՌՃԷմազիլ Էվվել ամսոյ ՌՈՁ (1679)։

Վերակացուք և խնամակալք կալուածոց Մէնէ+ կոչեցեալ դպրոցին այլազգեաց, որք էին Եասին և Գատրի, մատուցին գիր ամբաստանութեան 'ի Դուռն զազգէն Հայոց, ասեն, զմի մասն կալուածոց դպրոցին, որոյ տեղին կոչի Սիոն, կից վանաց Ս. Փրկչի, յանիրաւի յափշտակեալ զայն Հայոց, արարեալ են ինքեանց դերեզմանատեղի, եւ յառաջագոյն յիւրաքանչիւր ամի 10 սուլթանի ոսկիս վճարէին դպրոցին այնմիկ, որպէս ցուցանեն տումարք կալուածոցն, իսկ այժմ զլանան հատուցանել զնոյն 'ի ինաս կալուածական իրաւանց եւ այսպիսի եղանակաւ առին հրովարտակ յԱրքայէ։ Սակայն պատուիրէ 'ի նմա դատաւորին քննել եւ իմանալ ճշմարտութեամբ արդարութեամբ օրինօք Շէրիի, թէ արդարեւ այնպէ՞ս իցէ, որպէս ամբաստանեն։ Գրեալ յամսեանն Բամազանի, ՌՈՀԹ (1678)։ Եւ մատուցեալ նոցա զհրովարտակն զայն առ դատաւորն Երուսաղէմի, խնդրեցին կոչել զգլխաւորս քրիստոնէից, զորոց ամբաստանեալ էին։ Կոչեցան փոխանորդք Երից վանաց, Եուվանոփ՝ Յոյն. Սալվաթոռ՝ Լատին, Խաչատուր Եպիս-